ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԿՈՒՐԹԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Կուրթան համայնք,
գ. Կուրթան , Հեռ. (0256)6-19-99
« 19» սեպտեմբերի 2017թ. թիվ 144

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ Ա. ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Նալբանդյան

Կից ուղարկում ենք Կուրթան համայնքի ավագանու 2017թ. սեպտեմբերի 12-ի թիվ 09 նիստի թիվ 32-35 որոշումները:

Առդիր 5թերթ:

Համայնքի ղեկավար` /Մ.Գևորգյան/

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԿՈՒՐԹԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Կուրթան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Կուրթան, (0256) 61999, kurtan.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

12 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2017թվականի N 32

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետը՝ Կուրթան համայնքի ավագանին որոշեց.

Հաստատել Կուրթան համայնքի ավագանու 2017թ. սեպտեմբերի 12-ի թիվ 09 նիստի օրակարգը՝
1. Կուրթան համայնքի 2017թ. տարեկան բյուջեում փոփոխություններ կատարելու մասին:
2.Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերը աճուրդ-վաճառքով օտարելու և վարձակալության տալու մասին:
3. Համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին սոցիալական օգնություն հատկացնելու մասին:

| Համայնքի ավագանու անդամներ | Կողմ /4/ | Դեմ /0/ | Ձեռնպահ /0/ |
|---|---|---|---|
| Դանիելյան Գարիկ | [signature] | | |
| Դավթյան Վահե | [signature] | | |
| Դարբինյան Էդգար | [signature] | | |
| Մագթաղյան Գնել | [signature] | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ [signature] ՄՀԵՐ ԳԵՎՈՐԳՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
# ԿՈՒՐԹԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Կուրթան համայնք,
հասցե՝ ՀՀ Լոռու մարզ գ.Կուրթան,
Հեռախոս՝ 025661999 Էլ.Փոստ՝ kurtan.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ու Մ

«12» սեպտեմբերի 2017 թվականի N 33

### ԿՈՒՐԹԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2017Թ. ՏԱՐԵԿԱՆ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով << ՏԻՄ>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին կետի 5-րդ ենթակետը՝ Կուրթան համայնքի ավագանին որոշեց.

Հաստատել 2017թ. տարեկան բյուջեում կատարված հետևյալ փոփոխությունները.

Մուտքային մասում՝

Տեղական վճարներում ավելացնել 163000/մեկ հարյուր վաթսուներեք հազար/ ՀՀ դրամ:

Ծախսային մասում՝ Կառավարման ապարատ նախահաշվի 5121 հոդվածում պակասացնել 300000 /երեք հարյուր հազար/ դրամ, աղբահանություն նախահաշվի 5129 հոդվածում ավելացնել 900000/ինը հարյուր հազար/ դրամ, նախադպրոցական կրթություն նախահաշվի 4637 հոդվածում ավելացնել 163000/մեկ հարյուր վաթսուներեք հազար/ դրամ, ճանապարհային տրանսպորտ նախահաշվի 5112 հոդվածում պակասացնել 600000/վեց հարյուր հազար/դրամ:

| Ավագանու անդամներ | Կողմ /4/ | Դեմ /0/ | Ձեռնպահ /0/ |
|---|---|---|---|
| Դանիելյան Գարիկ | [signature] | | |
| Դավթյան Վահե | [signature] | | |
| Դարբինյան Էդգար | [signature] | | |
| Մազթաղյան Գնել | [signature] | | |

Համայնքի ղեկավար՝ [signature, stamp] /Մ. Գևորգյան/

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
## ԿՈՒՐԹԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀՀ Լոռու մարզի Կուրթան համայնք, Լոռու մարզ գյուղ Կուրթան
0256/61999/, Էլ.Փոստ՝ kurtan.lori@mta.gov.

## ՈՐՈՇՈՒՄ

«12» նոյեմբեր-ի 2017թվականի N 34

### ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ԱՃՈՒՐԴ –ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 21-րդ կետը՝ Կուրթան համայնքի ավագանին որոշեց.

1.Տալ հավանություն համայնքային սեփականություն հանդիսացող հողերը

I. աճուրդ-վաճառքով օտարելուն՝

1/ 0,1145հա հողամասը, նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի, գործառնական նշանակությունը՝ հասարակական կառուցապատման, ծածկագիր 06-057-0015-0027, 1լոտով, մեկնարկային գինը 254200/երկու հարյուր հիսունչորս հազար երկու հարյուր / դրամ,

2/ 0,01841հա հողամասը, նպատակային նշանակությունը արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության, գործառնական նշանակությունը՝ արդյունաբերական օբյեկտի, ծածկագիր 06-057-0073-0015, 1լոտով, մեկնարկային գինը 40900/քառասուն հազար ինը հարյուր/ դրամ:

II. վարձակալության տալուն՝

1/ 0,3228հա հողամասը, նպատակային նշանակությունը՝ գյուղատնտեսական, գործառնական նշանակությունը՝ արոտավայր, ծածկագիր 06-057-0129-0016, 1լոտով, 25 տարի ժամկետով, մեկնարկային գինը 900/ ինը հարյուր / դրամ,

2/0,1032 հա հողամասը, նպատակային նշանակությունը՝ գյուղատնտեսական, գործառնական նշանակությունը՝ արոտավայր, ծածկագիր 06-057-0129-0017, 1լոտով, 25 տարի ժամկետով, մեկնարկային գինը 300 /երեք հարյուր/դրամ:

2. Վերոնշյալ հողերի աճուրդ-վաճառքի և վարձակալության մասին տալ հայտարարություն:

| Ավագանու անդամներ | Կողմ /4/ | Դեմ /0/ | Ձեռնպահ /0/ |
|---|---|---|---|
| Դանիելյան Գարիկ | [signature] | | |
| Դավթյան Վահե | [signature] | | |
| Դաբբինյան Էդգար | [signature] | | |
| Մազթաղյան Գնել | [signature] | | |

Համայնքի ղեկավար՝ [signature] /Մ. Գևորգյան/

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
## ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
## ԿՈՒՐԹԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Կուրթան համայնք,
հասցե՝ ՀՀ Լոռու մարզ գ.Կուրթան,
Հեռախոս՝ 0256661999, Էլ.Փոստ՝ kurtan.lori@mta.gov.am

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

«12» սեպտեմբերի 2017 թվականի N 35

### ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 7-րդ կետով, 44-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով, համայնքի ավագանու 2014 թվականի դեկեմբերի 12-ի «Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ Կուրթան համայնքի ղեկավարին վերապահված կամավոր լիազորությունների իրականացման և դրանց համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների հատկացման կարգը հաստատելու մասին» թիվ 52-Ա որոշմամբ, հիմք ընդունելով ստացված դիմումները, համայնքի ղեկավարի առաջարկությունը և համայնքի պատերազմի վետերանների սոցիալական խնդիրների լուծման, հաշմանդամների, սոցիալապես անապահով այլ խավերի սոցիալական պայմանների բարելավման վերաբերյալ դիմումները քննարկող հանձնաժողովի եզրակացությունները՝

Կուրթան համայնքի ավագանին որոշում է.

11.Բավարարել համայնքի բնակիչների դիմումները, համայնքի բյուջեից
Սոցիալապես անապահով երեք ընտանիքների հատկացնել սոցիալական օգնություն՝ համաձայն հավելվածի:
2.Համայնքի ղեկավարին՝ ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ սույն որոշման կատարման ուղղությամբ և որոշումն ուժի մեջ մտնելուց հետո 10-օրյա ժամկետում բնակիչներին վճարել հատկացված գումարները:
3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

| Համայնքի ավագանու անդամներ | Կողմ /4/ | Դեմ /0/ | Ձեռնպահ /0/ |
|---|---|---|---|
| Դանիելյան Գարիկ | [signature] | | |
| Դավթյան Վահե | [signature] | | |
| Դարբինյան Էդգար | [signature] | | |
| Մագթաղյան Գնել | [signature] | | |

Համայնքի ղեկավար /Մ. Գևորգյան/

Հավելված
ՀՀ Լոռու մարզի
Կուրթան համայնքի ավագանու
2017թվականի սեպտեմբերի 12-ի N35որոշման

# ՑՈՒՑԱԿ
## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԿՈՒՐԹԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻՑ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՑՈՂ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ

| Հ/Հ | Ազգանուն Անուն | գումարի չափը/ՀՀ դրամ/ |
|---|---|---|
| 1 | Գևորգյան Կարեն | հիսուն հազար |
| 2 | Դոլմազյան Մարինե | երեսունինը հազար |
| 3 | Գևորգյան Գագիկ | քառասուն հազար |
| Ընդամենը՝ մեկ հարյուր քսանինը հազար դրամ: | | |

ԿՈՒՐԹԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ (ստորագրություն) Թամարա Գրիգորյան